ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

N 260
թ.01.Դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 81 որոշումը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Արմեն Ալոյան**

Կպտ. ՝ Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ն.Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 81

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ«Հողային օրենսգրքի» 59-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով,«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Խորեն Նորիկի Ասլանյանի դիմումը. Որոշում եմ.

1.Վերականգնել Դարպաս համայնքի 06-033-0073-0011 ծածկագրի հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը.
ա)հողամասի մակերեսը 0.14501 հա
բ)հողամասի սահմանները և մակերեսը համաձայն հատակագծի:
2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից 0.08 հա օրինական հողամասը՝ հիմք հողի բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման քաղվածքը և ինքնակամ զբաղեցված և առ այսօր առանց իրավունք հաստատող փաստաթղթերի օգտագործվող 0.0651 հա մակերեսով հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1991թ. կառուցված 68.84 քմ. բնակելի տան, 8.75 քմ. ծածկարանի և 1992թ. կառուցված 47.75 քմ. անասնագոմի նկատմամբ, օրենքի ուժով,անհատույց ճանաչել Խորեն Նորիկի Ասլանյանի /ծնվ. 1965թ./, Թագուհի Շամշիկի Դանիելյանի /ծնվ. 1966թ./, Արմեն Խորենի Ասլանյանի /ծնվ. 1991թ./, Անուշ Խորենի Ասլանյանի /ծնվ. 1991թ./ համատեղ սեփականության իրավունքը:
3.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4.Հողամասի վրա առկա է 2017թ-ին ինքնակամ կառուցված 257.35 քմ բնակելի տուն և 10.61 քմ բաց պատշգամբ
5.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 08.11.2017թ. թիվ 80 որոշումը:
6.Անշարժ գույքին տրամադրել 7 փող. 6 փակ.12 փոստային հասցե:
7.Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կ.Ա.Ա.Գ.Կ.Պ.Կ. աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**